Պարույր Սևակ

Հիվանդություն

Եռում է ջուրը.
Ասես թոքերի բորբոքում ունի մինչևիսկ սա էլ:
Իսկ բուժո՛ղն ով է,
Եթե հիվանդ ես հիմա և ինքըդ,
Ու քեզ բուժում են
Նաև թեյ կոչված նո՛ւյն եռման ջրով,
Որ նմանապես
Թոքերի ուժեղ բորբոքում ունի...
Հիվանդ հայացքըդ
Մութ մառախուղի վեհ վերելակով
Թագավորաբար լեռն է բարձրանում,
Ինչպես երևի բարձրացել են գահ...
Տենդոտ հայացքըդ
Հիմա հածում է դիմացի ձորում,
Որտեղ պառկած են այլազան քարեր՝
Բրածոյացած նախնիների պես...
Թեպետ իրար հետ վաղուց եք ծանոթ,
Թեպետ ծանոթ է պապերի՛դ անգամ,
Բայց քրտնած գլխով տված բարևիդ
Չի՛ պատասխանում:
Դուրս տված բերնով ճամփած ժպիտիդ

Չի պատասխանում նո՛ւյնպես:
Իսկ ինչո՞ւ:
Որովհետև իր անունը... Ժայռ է,
Ինքն էլ երբևէ
Ոչ միայն կյանքում չի հիվանդանում,
Այլև... անմահ է...
Աստվա՛ծ իրեն հետ:
Դու թե՛յրդ խմիր:
Սառե՞լ է:
Տեսա՞ր. ջրի թոքերի բորբոքումն անցավ:
Կանցնի և քո՛նը:
Հապա եկ փորձենք. տաքություն չունե՞ս:
...Ջերմաստիճանի որոշման համար
Ձեռքը դնում են մարդու ճակատին:
Այդ շարժումի մեջ չկա՞ խոր իմաստ
Եվ խորհուրդ խորին,- ո՛վ ի՞նչ է կարծում:
Իսկ աշխարհումըս բանտեր քի՞չ կային,
Որ ստեղծեցին նաև այս մե՛կը՝
Այս ջերմաչա՛փը:
Եվ ի՞նչ հանցանք է գործել սնդիկը,
Որ տառապում է մենախցի մեջ...
Բայց գոնե լավ է,
Որ սնդիկային այդ մենախուցը
Լայն է ավելի, քան մարդկայինը:
Լա՞յն է, թե՞ երկար,- միևնույնը չէ՞:
Իսկ շատ չես խոսո՞ւմ.
Չէ՞ որ հիվանդը
Այսքան խոսելու իրավունք չունի:
...Կլռե՛մ:
Կուզես՝ կքնե՛մ անգամ,

Միայն թե... ջարդե՛նք այս ջերմաչափը:
Թվում է, թե իմ հիվանդությունը
Ո՛չ թե իմ մեջ է,
Այլ սրա՛, սրա՞
Այս ջերմաչափի՛:
Ուրեմըն ջարդե՛նք այս ջերմաչափը,
Եթե ես մեղք եմ՝ սնդիկն առավել...

9.11.1965թ.
Չանախչի